ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1412 26.05.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2143
27 05 2014

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսիանի ՁՊՎ և արձանագրվել է

4132
27 05

Թերություններ՝

Հերթապահ մասում Դիտորդական խումբը արձանագրեց, որ Դիտորդական խմբի կողմից տրամադրված <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը, որտեղ ներկայացված է իրենց իրավունքների և խմբի թեժ գծի վերաբերյալ, բացակայում էր, որը նախկինում փակցված էր հերթապահ մասում՝ քաղաքացուն հասանելի տեղ: Դիտորդական խումբը գտնում է, որ դա կատարվել է միտումնավոր, որպեսզի քաղաքացին չկարողանա լիարժեք տիրապետել իր իրավունքներին և զերծ մնա Դիտորդական խմբին դիմելուց:

Ընդհանուր ՁՊՎ-ն ուսումնասիրելուց Դիտորդական խումբը արձանագրեց, որ նախկինում խցերի պատուհանները, որոնք չէին բացվում, ներկայումս պատուհանները որոշ չափով բացվում են, բայց մեծ աշխատանք և ջանք ներդնելով, որովհետև խցերի պատուհանները բացելու նպատակով պետք է բարձրանալ տվյալ ոստիկանության բաժնի x սենյակ, այնտեղից անցնել զբոսաբակի վերևի մասում առկա ճաղավանդակների վրա և բացել: Արդյունքում պատուհանները լիարժեք չեն բացվում, և ավելին՝ կարելի է պնդել, որ ամեն օր տվյալ գործողությունը կատարել և խնցերի օդափոխությունը կազմակերպելը անհնարին է:

Եվս մեկ անգամ խնդրում ենք, համապատասխան միջոցներ ձեռնարկել, և լուծել ՁՊՎ-ի խցերի պատուհանները բացելու խնդիրը և ապահովվել անհրաժեշտ օդափոխություն:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Ընդհանուր ՀՊՎ-ի խցերը, տեսակցության սենյակը և ճաշասենյակը գտնվում էին փոշոտ վիճակում, իսկ երկրորդ խցի սրբիչը կեղտոտ էր:

Խախտումներ՝

Միաժամանակ ավելացնենք, որ ՀՊՎ-ի գրագրությունը ուսումնասիրելուց Դիտորդական խումբը հերթապահ մասի պետին, խնդրեց, որպեսզի ներկայացնի և միաժամանակ բացատրի, թե ՀՊՎ ընդունվող անձի գտնվելու տեղի վերաբերյալ, նրա ընտրած անձին ինչպես են տեղեկացնում: Եղավ մեկնաբանություն, որ իրազեկում չենք կատարում հարազատներին, նրանց գտնվելու տեղի վերաբերյալ, քանի որ մինչև անձին բերման են ենթարկում ոստիկանության բաժին, հարազատները արդեն այստեղ են գտնվում և անհրաժեշտություն արդեն չի լինում իրազեկելու:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումանսիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք յուրաքանչյուր ՀՊՎ-ին վերաբերող գրությունը չմիավորել մեկ գրության մեջ, այլ տալ առանձին- առանձին մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 1542 << 26 >> 06 2014թ.

Ձեր 26.05.2014թ. թիվ 2621/1412 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Սյունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Ոստիկանության Սիսիանի բաժնի հերթապահ մասում ս/թ-ի մայիս ամսին իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, ինչի պատճառով հերթապահ մասում փակցված բոլոր պաստառները, այդ թվում նաև դիտորդների խմբի կողմից տրամադրված՝ <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը, հանվել են: Դիտորդների խմբի այցելության օրը դեռ ամբողջությամբ ավարտված չեն եղել վերանորոգման աշխատանքները, այդ իսկ պատճառով պաստառները հերթապահ մասում փակցված չեն եղել, սակայն հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը խմբի անդամներին ցույց է տվել նշված պաստառը և հայտնել, որ այն փակցնելու են վերանորոգման աշխատանքների ավարտից հետո: Բացի այդ <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը փակցված է ՁՊՎ-ի խցերում և միջանցքում, ինչին քաջատեղյակ է դիտորդների խումբը, և կոռեկտ չէ դիտորդների խմբի արտաբերած այն միտքը, որ պաստառը հանվել է միտումնավոր, որպեսզի ձերբակալվածների հարազատները չկարողանան լիարժեք տիրապետել իրենց իրավունքներին և զերծ մնան դիտորդների խմբին դիմելուց:

2. ՁՊՎ-ի խցերի պատուհանները, որոնք շենքի կառուցման ժամանակվանից տեղադրվել էին առանց ծխնիների, ներկայումս ձևափոխվել և սարքավորվել են այնպես, որ դրանք բացվեն և խցերը օդափոխվեն ամեն օր: Ինչ վերաբերում է պատուհանները բացելուն, ապա ամենևին էլ կարիք չկա բարձրանալ բաժնի x սենյակ, այնտեղից էլ անցնել զբոսաբակի մետաղածածկի վրայով, ինչպես նկարագրվել է դիտորդների խմբի կողմից: Պատուհանները բացվում և փակվում են խցերի ներսից՝ փայտե ձողի միջոցով, քանի որ փականները բարձր են:

3. ՁՊՎ-ի խցերի, տեսակցության և սննդի տաքացման սենյակների փոշոտ, ինչպես նաև երկրորդ խցի սրբիչի կեղտոտ լինելու վերաբերյալ հայտնվում է, որ կատարված ստուգումների արդյունքում պարզվել է, որ դիտորդների խմբի այցելությունից անմիջապես առաջ բաժնի մաքրուհու կողմից մաքրվել է ընդհանուր ՁՊՎ-ի տարածքը և ՁՊՎ-ի վարչակազմի կողմից ստուգվել է խցերում առկա սպիտակեղենի սանիտարահիգիենիկ վիճակը: Եվ այս աշխատանքները կատարվում են ամեն օր, քանի որ վերադաս ծառայությունների կողմից սահմանվում է մշտական հսկողություն բոլոր ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ:

Խախտում

Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 11-րդ կետի՝ ձերբակալված և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին ՁՊՎ վարչակազմը կապի հնարավոր միջոցով տեղյակ է պահում վերջիններիս կողմից ընտրած անձին և այդ մասին կազմում տեղեկանք, որը դրվում է անձնական գործում: Այս գործառույթին վերաբերող մյուս բոլոր կողմնակի մեկնաբանությունները, որ <<հեռախոսազանգերով իրազեկումներ չեն տրվում, քանի որ մինչև անձին ձերբակալելը հարազատները արդեն բաժնում են լինում և տեղեկացված նրանց գտնվելու վայրի մասին>> ընդամենը ենթադրություններ են:

ՀՀ ոստիկանության շտաբ